Funded by the European Union

Քաղաքացիական հասարակության դիմակայունության ամրապնդում Արևելյան գործընկերության երկրներում (ERICS-EaP)



Իրականացման ժամանակահատված: 01.03.2024 - 01.03.2027

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 1 500 000

Ընդհանուր բյուջե: € 1 745 213

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Transatlantic Foundation

Նախագծի կայքէջ: gmfus.org/enhancing-resilience-civil-society-eastern-partnership-erics-eap

Նախագծի նկարագրություն:

Ծրագիրը նպատակ ունի ուժեղացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը ժողովրդավարական կառավարման և բարեփոխումների գործընթացներում Արևելյան գործընկերության վեց երկրներում:
Այս նպատակին հասնելու համար ծրագիրը ներառում է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են ՔՀԿ-ների կազմակերպական կարողությունների զարգացմանը և ռիսկերի կառավարման հմտությունների ամրապնդմանը, ինչպես նաև տրամադրում են ուղղակի ֆինանսական աջակցություն՝ դիմակայունության, համագործակցության և ճանապարհածախսի դրամաշնորհների տեսքով: Այս աջակցությունը ՔՀԿ-ներին հնարավորություն է տալիս ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ, կազմակերպական և ֆինանսական ռեսուրսներ, ինչպես նաև զարգացնել տարածաշրջանային կապեր՝ որպես կայուն և արդյունավետ ժողովրդավարական դերակատարներ գործելու համար:
Ծրագիրն իրականացվում է Ադրբեջանում, Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Նախատեսվում է, որ այն ուղղակիորեն կաջակցի շուրջ 500 քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և նրանց աշխատակիցներին: Աջակցության հիմնական մասը կտրամադրվի երրորդ կողմերին ֆինանսական աջակցություն տրամադրելու միջոցով, որը կազմում է ծրագրի ընդհանուր բյուջեի մոտ 68.5 տոկոսը:

Ակնկալվող արդյունքներ:

1. Բարելավել տարածաշրջանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ֆինանսական և ռեսուրսային հիմքը:
2. Քաղաքացիական հասարակության կարևոր խմբերին տրամադրել նպատակային կարողությունների զարգացում, որպեսզի նրանք կարողանան ուժեղացնել իրենց հասանելիությունը, ազդեցությունը, տեսանելիությունը, հաշվետվողականությունն ու կառավարման կարողությունները:
3. Աջակցել քաղաքացիական հասարակությանը ավելի սերտ կապ հաստատելու քաղաքացիների, համայնքների և շահառու խմբերի հետ, ինչպես նաև կապ ստեղծելու կառավարման տարբեր մակարդակների հետ:
4. Խթանել տարածաշրջանային և միջազգային համագործակցությունն ու փորձի փոխանակումը քաղաքացիական հասարակության հարթակների և ցանցերի միջոցով: